Ա. ՏԱՐԻ — ԿԻՐԱԿԻ 29 ՅՈՒՆԻՍ 1897 — Թիւ 10

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
20 Թիւի համար
Վառնա . . . . Ֆր. 1,50
Վառնայէն դուրս . . . » 2
Արտասահման . . . . . » 2,50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք ետ չեն դրկուիր: Նամակ դրամ եւայլն ղրկել հետեւեալ հասցէին,
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ԿԱՏԱԿ»Ի
Վառնա (Պուլկարիա):

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието
„ГАДАГЪ“
ВАРНА (България).

Հատը 7 1/2 Սանթիմ

Administration du journal
« GADAG »
VARNA, (Bulgarie).

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Ուշաբերիլ պէտք է:

Գիտակցաբար ու դիտմամբ չարութիւն գործելը վատութիւն է, սակայն անգիտակցաբար չարութիւն գործելն ալ որ և իցէ փաստերով չի կրնար արդարանալ:

Օրինակի համար, մէկը մասնաւոր դիտումով ու կանխամտածմամբ ոճիր մը կը գործէ, մարդ մը կսպաննէ ու տունը կայրէ, իսկ անդին ուրիշ մը, առանց ան դիտումը ունենալու անգիտակցաբար կելնէ ազգ մը կը դաւաճանէ, ժողովուրդ մը կ'սպաննէ և շատ մ'ալ տուներ կ'այրէ, շօշափելի հետեւանքը ի՞նչ կըլլայ, հետեւանքը միեւնոյն է, և տարբերութիւնը սոսկ տառական, այսինքն, Չ գիր մը, գիտակցաբար և չգիտակցաբար:

Մեր ժողովուրդի ներկայ թշուառ վիճակը՝ որն որ ամենուս աչքին առջեւ կենդանի ու անուրանալի իրողութիւն մ'է. գիտակցաբար կամ չգիտակցաբար գործուած սխալներուն հետեւանքն է, և որոյ հեղինակներն ոյքե՞ր ալ ըլլին և ուր ալ փախչին չեն ազատիր հանրական դարձած զայրութեն, ժողովուրդին հոգւոյ բըխեալ միլիոնաւոր անէծք ու խշոցքներէն:

Մեր ըսածներն յուսահատական չեն, չենք կրնար ըսել թէ ազգ մը ապագայ չունենար: Անտարակոյս լաւ ապագայ մը ունենալու համար ալ աշխատիլ հարկաւոր է, շարունակել, յարատեւել անվհանգ, բայց ո՛չ թէ սկսուած սխալով, այլ ուղիղ ճանապարհով և ուղիղ գծով:

Ուշաբերինք ու չորս կողմերնիս աղէկ մը դիտենք, տեսնենք թէ ոյքե՞ր են որ կուզեն մեզի առաջնորդել: Ոյքե՞ր են, որ իրենց դեռ չգացած, դեռ չը տեսած ճանապարհով մեզի մեր տունը տանել կուզեն:

Ո՞վ է Նազարբէկեան, ո՞վ է Արփիարեան. որո՞նք են Հնչակ ու Դրօշակ ըսուածները, մեզի Հայաստան տանողները, ու՞ր ծնած են, ու՞ր ապրած են, Հայաստան գնացած ունի՞ն, քանի՞ տարի, քանի՞ ամիս կամ օր ու ժամ ապրած են հոն, և ու՞ր, ո՞ր կողմ. գիտէի՞ն տեղական հանգամանքները և այսօր իսկ հասկցա՞ծ են, ուշաբերա՞ծ են ու գիտե՞ն թէ ի՞նչ պէտք է ընել:

Մենք այդ Պ. ինքնակոչ և ինքնընտիր ղեկավարիչներուն հետ ոչինչ անձնական հաշիւ չունինք ու չենք ունեցած ալ, այլ միայն կը խրատենք զիրենք որ այդքան յախուռն և ինքնահաւանութեամբ ժո-

ղովրդի ճակատագրին հետ չը խաղան, և իրենց խելքի փչած աղդաջինջ ցոյցերովն որբերուն թիւը չը բազմապատկեն և ի զուր հոդեհանդատացուներ չը պատրաստեն։

Յեղափոխութիւն, այո՛, բայց խոհեմ ընթացքով, համամիտ խորհրդածութեամբ, ժողովրդի համար և ժողովրդին հետ, ապա թէ ոչ. չէ թէ անդիտակցաբար, այլ բացէ ի բաց գիտակցական ոճրագործութիւններ՝ որոնց հաշիւը իրաւամբ պիտի պահանջէ իրենցմէ ժողովուրդ ըստուած վեհապետութիւնը։

Յ. ՉԱՐԵԱՆ

ՓՈՔՐԻԿ ՆԱՄԱԿՆԵՐ

Բ

Յեղափոխութի՛ւն, յեղափոխակա՛ն։

Ահա երկու բառեր, որոնք ամեն ժամ, ամեն րոպէ լսում եմ Պուլղարիա մնած օրից։ Այդ բառերը արտասանում են և Կ. Պոլսի խոհանոցի «չըրաղը», վասպուրականցի «փենադին», մշեցի դէմքին այրուած «համալը» և բնիկ պուլղարիացի հայը, որը չորս բառ հայերէն խօսել չիմանում և ամենից բարձր թիֆլիզեցի տանձ ծախողը...։ Եթէ խեղճ Պարոնեղը կենդանի լիներ և միանդամ անցներ այս վերջին ամիսներ՝ Կ. Պոլսի հրաչակաւոր քաղաքագործութիւնից, յետոյ Պուլղարիայի քաղաքներից և իմանար այնքան մեր լեզուն, որքան մեր թերախօս «յեղափոխականներ». խեղճ մարդ որքա՛ն պիտի նախանձէր Հայերիս։ Ցեր Աստուած, մարդ տասնեակ տարիներ աշխատուեց Իւրանտիայում և միշտ կը գանգատէր թէ ամենից դժուար բանն է տարկացած ժողովրդի մէջ յեղափոխութեան դաղափարները տարածել։ Մի՞այն նա կը նախանձէր։

Ամբողջ Եւրոպայի, Ամերիկայի, անցեալի, ներկայի և ապագայի բոլոր «մեծ» և «փոքր» յեղափոխականները բարի նախանձից չէին իմանար ինչ անել և եթէ նոքա մեր «մեծ» ուսուցիչների չափ համեստ լինէին կը թողնէին իրենց գործեր և կ՝երթային միաժամանակ ծրնէլ և մեր «մեծ» Յ. Դաշնակցութեան հռչակաւոր բիւրօն. ես հաւատացած եմ, այնքան գութ կ՝ունենար թշուառ մարդկութեան վրայ որ, կը բանար նոցա իրենց հրաչագործ դաղտնիքը թէ ի՞նչպէս նա կարողացել է այդքան յաջողութեամբ սովրեցնել անգրագէտ հայ լեռնցուն և կամ Կ. Պոլսի հոսահոս երիտասարդներին, որոնց ամբողջ կրթութեան պաշար կազմուած է Պէրպէրեանների անմիտ բառերի կուտակումից և ֆրանսիական աւելի անմիտ վէպերի ընթերցումից։ սոցիալիզմ, այն ինչ որ իրենք մի դարից աւելի չեն կարողանում մոցնել եւրոպական նոյն իսկ դիտնականների 99 0/0 ուղեղներում.....։ խեղճե՛ր։

Սուլթան Համիտը թեղ ուրախութիւնից ձեռներ չփէ և կըկնէ, «մեծ է ղորութիւն Ալլահի և նրա մեծ մարգարէի». Հայաստանի մէկ ծայրից միւսը շուտով, շուտով մի հատ Հայ չի մնար նմուշի համար։

Յիմա՛ր, նա չիմանում, որ մեր արճաբաններում, ազատ Պուլղարիայի մէջ ամեն օր միլիոնաւոր անդամ կրկնուում է, յեղափոխութի՛ւն, յեղափոխակա՛ն։

Թող այսօր թշուառացած ժողովուրդ աշխարհի չորս կողմ ընկած դլուխ դնելու տեղ չունենայ, թող սովորի մեր յեղափոխականների քեռականութիւն, ուղղական յեղափոխութիւն, սեռական «ազատ վախտ». ուղղական յեղափոխակաև, սեռական՝ «զարկաւ դպաւ»։ Սովորի՛ր Հայ ժողովուրդ և միսիթարուի՛ր։

Երջանիկ հա՛յ ժողովուրդ, դո՛ւ հոգ մի աներ, մի բարկանար որ պանդայի վրայ յարձակող «մեծ» հերոսներ իրենք ապաստանեցին և այսօ՛ր նոցա պատկերներ լուսանկարում ի ցոյց քեզ դրուած է, նայի՛ր նոցա և մոռացի՛ր քո մորթուած հօրդ, մօրդ, կնոջդ, զաւակներիդ և մխիթարուի՛ր թշուառութեանդ մէջ.... մեծ է զօրութիւն Ալլահի, ներողութիւն Հայ Յ. Դաշնակցութեան բիւրօյ և նոցա Պուլղարիայում գտնուած երջանիկ «ներկայացուցիչների», շուտով 16 միլիոն յեղափոխականներ կ'անցնին Հայաստան և թող այն ժամանակ տեսնեն Սուլթան և Եւրոպա, միայն սպասի՛ր տա՛ւր։

Տա՛ւր, որովհետև եթէ մինչեւ օրս կ'սպասեն և Հայաստանում սօցիալիստական դրախտ չեն հիմնած պատճառն այն է, որ այդ 16 միլիոն հերոսներից, մի միլիոն դեռ ատնամիթներ չունին։

Հայ ժողովուրդ տա՛ւր, տա՛ւր։ Չը լինի չտաս. գիտե՞ս ինչ կը լինի հետեւանքը։ Կուշակի՛ր։ Ես մոռացայ որ քո յիշողութիւնդ կարճ է։ Ես քեզ ասեմ Ցանկաստանի մէջ մէկ ու կէս հայ է մնացել և մեր 16 միլլիոն յեղափոխականներից միայն ուր hոqի «մեծ հայդուկներ» կ'անցնեն և խելօք ազատուելով նոցա՛ էլ կոտորել կ'տան.... տա՛ւր, ինձ լսի՛ր։

Լ.ԻԹ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—o—

— Բարի ես եկեր Մխուսիւ Շարլ, այս չէ՞ր ձեր անունը, արդեօք սխա՞լ կ'ըսեմ։

— Այո՛ օրիորդ, սակայն գրական անունս Շահէն է։

Ի՞նչ կայ չը կայ Պոլիս, վախերնո՞ւդ եկաք։

— Ամենեւին, ի՞նչ կայ վախնալու. հոն եղած մնասեսական սադնայն է որ զիս հոս մղեց, և ոչ ուրիշ բան։

— Կը կարծէ՛ք որ հոս վառնայի մէջ գործ կա՞յ։

— Հոս գոնէ հայկական գործը կայ. Պոլիս ան ալ չը կայ։

— Հայկական գո՛րծ.... Ատամի գործարանի՞ն համա՞ր էք, ալ դադրեցուց։

— Ի՞նչ Ատամ, ի՞նչ գործարան, ես Հայկական ազգասիրական գործին պիտի նուիրեմ ինքզինքս. ազգային դատին պիտի աշխատիմ, գործիչ պիտի ըլլամ։

— Գործիչ պիտի ըլլա՞ք....։

— Ինչո՞ւ կը զարմանաք, սիրելի օրիորդ.

— Գործի՞չ... այդ սէրտէրի մորուքով, այդ համիտիյէ Ֆէսով, երբէք չը պիտի յաջողիք, պարոն։

— Այդ բաները մէկ ակնթարթի մէջ կը յարթուին, բաւական է որ կուսակցութիւնն զիս գոհացնէ և կանխավճար մը ընէ։

— Վճարուի՞լ ալ կը պահանջէ.ք. ազգին ծառայելու համար։

— Բաւ լսյի՛ ես իմ ազգասիրութիւնս, ազգասիրական եռանդս, ազգային ոգիս ծրկապէս, առանց փոխարինութեան, սիրելի ազգիս տրամադրութեան տակ կը դնեմ. սակայն գործիականութիւնս...։

— Պարապ տեղը Պոլիսը թողած էք, պարոն։

— Ինչո՞ւ, սիրելի օրիորդ։

— Վասնզի հոս վառնայի մէջ, գործիականութի՛ւն կ'ըսէք. ի՛նչ կ'ըսէք, անանկ բանի տակ չեն տար։

– Այն ատեն կ'անցնիմ Աթէնք, կ'անցնիմ Մարսիլիա, կանցնիմ Վիէննա, կանցնիմ Բարիզ, կ'անցնեմ Ժընեւ, կ'անցնիմ Լօնտրա, կ'անցնիմ դեռևս անկը մինչեւ Ամերիկա, կեցցէ ապակեդրոնացում, ի՞նչ կ'ըսէք օրիորդ։

— Եթէ մեզմէ այդչափ հեռանաք, կեցցէ.ք և դուք պարոն։ Գ.

ՀԱՆԵԼՈՒԿ, ԹԻՒ 5

Մենք չորս վաշտ զօրք ենք,
Զատ զատ հագուստով,
Թէ հաշիւ ընենք,
Նոյն կ'ելլանք թուով։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԵՌԱԳԻՐՔ «ԿԱՏԱԿ»Ի

Կ. Պոլիս, 27 Յունիս

Անցեալ տարուան հայ յեղափոխականաց պանդային ցոյցը իւր արդիւնքը ունեցաւ, վեց նահանգներու բարենորոգմունք գործադրուելոյն լմնցան, միայն մի քանի կէտեր և տարակէտեր տակաւին կը մնան, զորս Սուլթանը պատրաստականութիւն կը ցուցնէ կարգադրելու, հայկական նոր ցոյցէ մը անմիջապէս յետոյ։

Թեհրան, 28 Յունիս

Տիար Մինաս Զէրաղի բեհնտի կեղեւ բարեկամներէն և Լառմէնի լրատու չեզբապատիւ Ամերիկացին իմանալով որ Դաշնակցականք՝ կը պատրաստուին ցոյց մ'ալ Ամերիկէի մէջ ընելու, ճիշդ Օթոման պանդային պէս, չեզբութեամբ նոր անկողինական լուրեր հաղորդելու համար Անթիլեան կղզիներուն մէջ գտնուող Դրօշակեաններուն քովը գացած է, սակայն Պոմպայ հասած ատեն բժշկական քննութեամբ մը հաստատած է որ՝ ուղեղի խանդարում ունի և դիւահարութեան ատիճանին հասնելու մօտ է, ուստի անմիջապէս մնաակայ յիմարանոցի մը մէջ դրուած է ի քաւութիւն դեռ գործելիք մեղաց և ի բժշկութիւն ոտից ցդլուկ դաշնակցական խելապատակին։

Ժընէվ, 28 Յունիս

Դաշնակցական ահաբեկչաց Պարսկաստան աշխարհին մէջ թողուցած սոսկալի ու սարսափելի աղդեցութիւններն՝ զորս ընորհիւ ամերիկացի ոմն անկողինակալի ի լուր և ի հաւատ ժողովրդեան հրապարակ հանող «Լ'Ամէնի» լրագրին և անոր երկրորդ տպագրութիւնն եղող Վառնացի իրաւունքին համար Դաշնակցականաց մեծ կեդրոնից որոշեց մէկմէկ զոյգ ահաբեկարիք ակնոց պարգեւ աղարկել առ ի վարձատրութիւն իրենց կամաւոր բրօքականուիցայիայի։

Առձեռն խրատ մը

ՊԱՐՈՆ ԵՍ ԹԵՐԻՆ

Ձեր Յունիս 26 թուով բաց նամակն արժէք մը չունեցաւ մեզ մօտ, զի ինչպէս պատերազմի դնայողին համար զէնք է հարկաւոր, նոյնպէս և նամակ գրողին պէտք է յայտնի տառերով ստորագրութիւն։ «Կատակ»ի 8 երդ. թիւի մէջ տպուած նամակին՝ յայտնի ստորագրութիւններ ունէր, պարոն. Ձեր ստորագրած Եսթերը ո՞ր տեսակէն է, տաճկերէն յա՞ ըսուածը, թէ ֆրանսերէն Ester կամ Estère ը։ Մեր կոչիկը ամուր է, պէտք է դուք ալ ուղիղ ճանապարհը ճանչնաք. այս տեղ Գուլկարիսթան է, Օսման աղայի քաղաքը չէ։

Ա. Զ Դ

Կատակ կը ծախուի նաեւ հետեւեալ տեղերն։

Ստամբուլի սրճարանին ծխավաճառ Պ. Թէրկեանի մօտ. Մուսալլա, Ապտուլրահման մղկիթին դիմացը Պր. Ա. Զարպհանէլեանի եւ Մուսալլա, Վասպուրական սրճարան Պ. Գեղամ Տ. Յարութիւնեանի մօտ։

Отговорникъ: П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.